ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՇՄՆԷՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/26» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «06» նոյեմբերի 2026թ.ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Վարդանյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Գալստյան, Ա. Դավթյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Ղազարյան

1. Նիստի օրակարգը

2026 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 2 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունների շտկման արդյունքների գնահատում, հայտերի գնահատման ամփոփում, ընտրված մասնակիցների որոշում և անգործության ժամկետի սահմանում:

2. Շտկումների ներկայացումը և գնահատման արդյունքները

2.1. Հանձնաժողովն արձանագրեց, որ «Այթի Պլանետ» ՍՊԸ-ն և «ՖՈՒԴ ՄՈՒԴ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել են թիվ 2 արձանագրության 8.2 կետում արձանագրված անհամապատասխանությունների շտկումները:

2.2. «Այթի Պլանետ» ՍՊԸ-ն 9-րդ և 11-րդ չափաբաժինների համար ներկայացված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերում լրացրել է ֆիրմային անվանման, ապրանքային նշանի, մակնիշի և արտադրողի անվանման վերաբերյալ բացակայող տվյալները:

2.3. «ՖՈՒԴ ՄՈՒԴ» ՍՊԸ-ն ներկայացրել է 12-րդ և 14-րդ չափաբաժինների համար առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերը:

2.4. Ներկայացված շտկումների ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը պարզեց, որ արձանագրված անհամապատասխանությունները վերացվել են, իսկ համապատասխան չափաբաժինների հայտերը և առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերի պահանջներին: Նշված հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Ընտրված մասնակիցների որոշումը

3.1. Հիմք ընդունելով թիվ 2 արձանագրությամբ ամրագրված էլեկտրոնային աճուրդի արդյունքները, մասնակիցների զբաղեցրած տեղերը և հայտերի գնահատման արդյունքները՝ ստորև նշված մասնակիցներին համապատասխան չափաբաժինների մասով ճանաչել ընտրված մասնակիցներ (հաղթողներ)՝ որպես հրավերի պահանջներին համապատասխանող հայտ և առաջին տեղն զբաղեցրած գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ:

Չափաբաժին	Ընտրված մասնակից	Գին առանց ԱԱՀ ՀՀ դրամ	Վերջնական գին ՀՀ դրամ
1	«Մեծ Ծիածան» ՍՊԸ	14,867.00	17,840.40
2	ՍՈՆԻԿ ԵՐԻՑՅԱՆ ԱՇՈՏԻ Ա/Ձ	22,000.00	26,400.00
3	«Մեծ Ծիածան» ՍՊԸ	28,873.00	34,647.60
4	«Մեծ Ծիածան» ՍՊԸ	74,250.00	89,100.00
5	Վենտոլա ՍՊԸ	61,666.67	74,000.00
6	«Մեծ Ծիածան» ՍՊԸ	69,000.00	82,800.00
7	«Մեծ Ծիածան» ՍՊԸ	41,666.67	50,000.00
8	Դավթյան Դիանա Արարատ Ա/Ձ	37,000.00	37,000.00
9	Այթի Պլանետ ՍՊԸ	28,540.00	34,248.00
10	ՏԵՆԴԵՐ ՍՈԼՈՒՇՆ ՍՊԸ	13,756.00	16,507.20

Չափաբաժին	Ընտրված մասնակից	Գին առանց ԱԱՀ ՀՀ դրամ	Վերջնական գին ՀՀ դրամ
11	Այթի Պլանետ ՍՊԸ	24,100.00	28,920.00
12	ՖՈՒԴ ՄՈՒԴ ՍՊԸ	16,250.00	19,500.00
14	ՖՈՒԴ ՄՈՒԴ ՍՊԸ	23,958.34	28,750.00
15	«Մեծ Ծիածան» ՍՊԸ	120,000.00	144,000.00

3.2. Աղյուսակի վերջնական գները ներառում են կիրառելի հարկերը: Ընտրված մասնակիցները և նրանց զբաղեցրած տեղերը ներկայացված են թիվ 2 արձանագրության 6-րդ բաժնում ամրագրված տվյալների համաձայն:

3.3. 13-րդ չափաբաժնի մասով ուժի մեջ է մնում թիվ 2 արձանագրության 12.5 կետով ընդունված՝ չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին որոշումը, քանի որ ներկայացված բոլոր հայտերը էլեկտրոնային աճուրդի համակարգում մերժված են:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Պայմանագիր կնքելու մասին որոշումը և անգործության ժամկետը

4.1. Հաստատել սույն արձանագրության 3.1 կետում նշված մասնակիցների հետ համապատասխան չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու մասին որոշումը:

4.2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից սահմանել 10 օրացուցային օր անգործության ժամկետ:

4.3. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել ապահովել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակումը տեղեկագրում՝ ընտրված մասնակիցների մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրվանից ոչ ուշ, ինչպես նաև սույն արձանագրության հրապարակումը՝ սահմանված կարգով:

4.4. Անգործության ժամկետի ավարտից հետո, պայմանագիր կնքելու մասին որոշման բողոքարկման բացակայության դեպքում, ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկները և պայմանագրերի նախագծերը՝ օրենսդրությամբ և հրավերով սահմանված կարգով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Ստորագրություններ

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Վարդանյան

Հանձնաժողովի անդամ՝ _____ Ն. Գալստյան

Հանձնաժողովի անդամ՝ _____ Ա. Դավթյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ս. Ղազարյան